

13 K

ԴԻՏՈՒՄՆԵՐԻ ԹԻՎԸ

Erit.am երիտասարդական պորտալի դիտումների թիվը առաջին եռամսյակում:

97 %

ՖԵՅՍԲՈՒՔՅԱՆ ԷՋԻ ՀԵՏԵՎՈՐԴՆԵՐԻ ԹԻՎԸ



256

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԹԻՎԸ

Erit.am երիտասարդական պորտալում հրապարակված նյութերի թիվը առաջին եռամսյակում:



Erit.am երիտասարդական պորտալն իր աշխատանքները սկսել է **08.02.2021** թ.–ին՝ նոր դիզայնով և տեխնիկական լուծումներով: Կայքի համար ստեղծվել է նաև նոր տարբերանշան՝ լոգո:

Հաշվետու ժամանակահատվածում **Erit.am** կայքում հրապարակվել է **256** նյութ: Այդ թվում՝ հեղինակային բովանդակությամբ նյութերի թիվը **116** է:
Տե՛ս գծապատկեր 1–ը:

Հաշվետու ժամանակահատվածում **Erit.am** կայքի այցելությունների թիվը կազմել է **13.000** , այդ թվում նոր օգտագործողների թիվը՝ **12.500**:
Տե՛ս գծապատկեր 2–ը:

Հաշվետու ժամանակահատվածում **Erit.am** երիտասարդական պորտալի ֆեյսբուքյան հետևորդների թիվը գրեթե կրկնապատկվել է՝ հասնելով **945**–ի:
Տե՛ս գծապատկեր 3–ը:

Գծապատկեր 1



Erit.am երիտասարդական պորտալի նոր կայքում առաջին եռամսյակում հրապարակվել է **256** նյութ, այդ թվում՝ 104 նորություն, 11 վերլուծություն, 56 հարցազրույց, 40 հայտարարություն, աշխատանքի 41 հայտարարություն, 4 հրապարակում եղել է «Պատկերասրահ» բաժնում:

Ըստ այդմ, կայքում հրապարակված նյութերից 116–ը կազմում են բացառիկ՝ հեղինակային բովանդակության նյութերը:

Գծապատկեր 2



Erit.am երիտասարդական պորտալի նոր կայքի գործարկումից հետո այցելուների թիվը կազմել է **13 000**: Այդ թվում՝ նոր օգտագործողների թիվը կազմում է **12 500**:

Ըստ **Google Analytics** համակարգի տվյալների՝ յուրաքանչյուր նոր այցելու կայքում ակտիվություն է ցուցաբերում շուրջ **8** րոպե: Վերադարձող այցելությունների միջին տևողությունը **3** րոպե է: Յուրաքանչյուր վերադարձող այցելու միջինում թերթում է **2.5** էջ:

Գծապատկեր 3



Երիտասարդական պորտալի ֆեյսբուքյան էջը՝ https://www.facebook.com/eritnews, համակարգող խմբին է փոխանցվել նոր կայքի գործարկումից օրեր անց: Այդ պահին էջն ուներ **500** հավանում:

Հաշվետու ժամանակահատվածում **Erit.am** երիտասարդական պորտալի ֆեյսբուքյան էջի հավանումների թիվը գրեթե կրկնապատկվել է՝ հասնելով **945**–ի: